

## ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

### Մահվան 100-ամյակի առթիվ

Հայ եկեղեցու 125-րդ կաթողիկոս Խրիմյան Հայրիկը (Մկրտիչ Վանեցի) իր մահկանացուն կնքեց 100 տարի առաջ՝ 1907-ի հոկտեմբերի 29-ին, 87 տարեկան հասակում: Աճյունը ամփոփված է Էջմիածնի Մայր տաճարի մուտքի առաջ:



Հայ ժողովրդի մեծ երախտավոր, հասարակական-քաղաքական եւ հոգեւոր-մշակութային նվիրյալ գործիչ, խոհուն մտավորական ու գրող, Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը ծնվել է 1820-ի ապրիլի 4-ին Վասպուրական նահանգի Վան քաղաքի Այգեստան թաղամասում: Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրում հորեղբոր՝ Խաչատուրի մոտ, որից հետո ուսումը շարունակել է Կտուց եւ Լիմ անապատների դպրոցներում:

1843-ին Խրիմյանը հաստատվում է Պոլսում. այստեղ Խասգյուղ թաղամասի դպրոցում աշխատում է որպես ուսուցիչ եւ հայրենասիրական ոգով դաստիարակում իր սաներին՝ նրանց մեջ վառելով հայրենասիրության հուրը: Եվ այդ հուրը ավելի լայն տարածելու, հայ գրականությունն ու մշակույթը աշխարհով մեկ սփռված հայերին հասու դարձնելու նպատակով հայրենանվեր երիտասարդ գործիչը սկսում է ճանապարհորդել հայաշատ վայրերում. լինում է Պարսկաստանում, Երուսաղեմում, Անդրկովկասում, Կիլիկիայում՝ ամենուրեք նպաստելով կրթության վեհ գործին:

1854-ին Խրիմյանը վերադառնում է իր հայրենի Վան քաղաքը եւ Աղթամար վանքում ձեռնադրվում է վարդապետ: Հիմնադրում է

Վարագա վանքի ժառանգավորաց գիշերօթիկ վարժարանը եւ դառնում վանքի վանահայրը: Նա ցանկանում էր Մխիթարյանների օրինակով տպարան հիմնել Վանում, գրքեր ու պարբերականներ հրատարակել: Սակայն հանդիպելով հետադիմական տարրերի դիմադրությանը, թողնելով Վանը, վերադառնում է Պոլիս: Այստեղ նրան հաջողվում է իրագործել իր ծրագիրը՝ հիմնում է տպարան եւ 1855-ին հրատարակում է «Արծվի Վասպուրական» հանդեսը, որը գրական ու մշակութային մեծ դեր խաղաց ոչ միայն Վանի ու Պոլսի, այլեւ ամբողջ հայ մտավորականության կյանքում: Հայրենասեր մտավորականի նպատակն էր տպարանն ու հանդեսը տեղափոխել հայրենի քաղաք, եւ դա նրան հաջողվում է:

Խրիմյանը ավելի հեռահար նպատակներ ուներ. 1860-ին այցելել է Արեւելյան Հայաստան՝ նպատակ ունենալով թեթևացնել հայ գյուղացու վիճակը, ավելի լայնորեն տարածելու հայկական մշակույթը, բոցավառելու հայրենասիրության ջահը:

1863-ին Խրիմյանին շնորհվում է նաեւ Տարոնի հոգեւոր առաջնորդարանի պաշտոն եւ նշանակվում է Սուրբ Կարապետ վանքի վանահայր: Նա այստեղ էլ է հիմնադրել Նոր ժառանգավորաց վարժարան եւ հիմնել է «Արծվիկ Տարոն» երկշաբաթաթերթը, որոնց տնօրինությունը հանձնել է անվանի մտավորական Գարեգին Սրվանձտյանին:

1869-ին Էջմիածնում օծվել է եպիսկոպոս, իսկ հաջորդ տարին ընտրվել է Պոլսի հայոց պատրիարք՝ մնալով միշտ անարդարությունների, հարստահարության ու խավարի դեմ անհաշտ պայքարող՝ իր դեմ լարելով խավարամիտ հոգեւորականներին ու հարստահարողներին: «Պիտի դառնամ հայրենիքս», մի նամակում գրել է նա ու 1873-ին հրաժարվել պատրիարքությունից, զբաղվել գրական աշխատանքով:

Հայ ժողովրդի երախտավորն ու հասարակական-քաղաքական մեծ գործիչը նորից է դուրս գալիս քաղաքական ասպարեզ ու Ազգային ժողովի որոշմամբ գլխավորում է 1878-ի հունիսին Բեռլինի կոնգրեսին Հայկական հարցը ներկայացնող հայ պատվիրակությունը:

«Բարձր դռան» պարտավորության 16-րդ կետով Թուրքիան պարտավորվում էր բարելավել իր տարածքում ապրող հայերի վիճակը. ապահովել հայերի կյանքն ու կայքը: Թուրքիան պաշտոնապես պետք է ճանաչեր Օսմանյան կայսրության սահմաններում ՀԱՅԱՍՏԱՆ երկրի գոյությունը: Եվ... Բեռլինի կոնգրեսում ուժ ու թիկունք չունեցող Հայկական հարցը 16-րդ հոդվածից տեղափոխվեց 61-րդ անորոշ ու տարտամ հոդվածը, որը ոչինչ չտվեց հայերին: Այստեղ, ականատես լինելով մեծ տերությունների դիվանագիտական աճպարարությանը, հայ պատվիրակները համոզվում են, որ անտեղի են հայերի հույսն ու հավատը, որ քաղաքակրթությունն ու մարդասիրությունը լոկ դիմակ են... Եվ դառնացած ու հիասթափված, խոսքաշեն ու հումորի մեծ զգացում ունեցող Խրիմյանը գրեց. «Ուրիշ պատվիրակներ այնտեղ հարիսան երկաթե շերեփով էին վերցնում, իսկ մեր շերեփը թղթից էր»:

Խրիմյանին մնում էր հայերին համախմբել ու ազգային ազատագրական պայքարի կոչել: Նա վերադարձավ Վան, ընտրվեց Վանի հոգևոր առաջնորդ եւ օգնություն կազմակերպեց Վանի սովյակներին, հիմնեց երկրագործական գիշերօթիկ վարժարան, եռանդուն մասնակցություն ցուցաբերեց Վանի «Մե խաչ» եւ Կարինի «Պաշտպան հայրենյաց» ազգային-ազատագրական գաղտնի կազմակերպությունների ստեղծմանն ու գործունեությանը: Բնականաբար, Խրիմյանի հայրենասիրական ու ազգանվեր նման գործունեությունը դուր չէր գալիս օսմանյան կառավարությանը, եւ 1883-ին նրան արտաքսում են Վանից նախ՝ Պոլիս, ապա՝ Երուսաղեմ:

Գնալով քարձրանում են Խրիմյանի հայրենանվեր գործունեությունն ու հեղինակությունը. 1890-ին ողջ հայությունը լայնորեն նշում է նրա ծննդյան 70-ամյակը: Այդ առթիվ «Մուրճ» ամսագիրը գրում է. «Նա այսօր, որպես եւ անցյալում, ամենահեղինակավոր, ամենապատկառելի, ամենավստահելի ներկայացուցիչն է այն գաղափարի, որ մի պատրիարքի դարձնում է Ներսես...»: Ահա թե ինչու Խրիմյանը մեծ ժողովրդականություն

վայելեց եւ ամբողջ հայության կողմից մեծարվեց ՀԱՅՐԻԿ պատվանունով:

1892-ի մայիսի 5-ին Էջմիածնի Հոգեւոր խորհուրդը, իր բացակայությամբ, 72-ամյա Սկրտիչ Վանեցուն միաձայն ընտրում է Ամենայն հայոց կաթողիկոս՝ Խրիմյան Հայրիկ անվանակոչությամբ: Մեկ տարի անց, սեպտեմբերին Խրիմյանը ժամանում է Էջմիածին եւ օծվում է հայ եկեղեցու 125-րդ կաթողիկոս:

Այստեղ՝ մայր հայրենիքում, Վեհափառի համար արդեն բացվում է աշխատանքի լայն ասպարեզ. նրա առաջին գործն է լինում միաբանել Մայր աթոռը, վերացնել ներքին հակասությունները միաբանության ներսում, կարգի բերել եկեղեցական գործերը եւ միաժամանակ լրջորեն զբաղվել հոգեւոր ճեմարանի հոգսերով: Ծեմարանի նյութական ու տնտեսական միջոցները բարելավելու համար Վեհափառ հայրապետը բարեգործական ընկերություն է կազմակերպում, որի շնորհիվ բարելավվում է ուսանողների ու դասախոսների սոցիալական վիճակը, բարձրանում է դասախոսների աշխատավարձը, կրկնապատկվում է ուսանողների թիվը. ուսանողներ, որոնք վաղվա ուսուցիչները, գիտնականները եւ կրթված ու բանիմաց հոգեւորականները պիտի դառնային, որոնց կարիքը խիստ զգում էր ոչ միայն Հայաստանը, այլեւ դրսում՝ տարբեր երկրներում բույն դրած հայությունը:

Ծեմարանում ուսման որակը բարձրացնելու եւ ճեմարանը բարձրագույն կրթություն ստացած մասնագետներով ու գիտնականներով ապահովելու համար Վեհափառը բարձրորակ մասնագետների է հրավիրում Փարիզից, Բեռլինից, Մոսկվայի Լազարյան ճեմարանից ու Ներսիսյան դպրոցից: Խրիմյանի զահակալության 15 տարիներին ծաղկեց ու բարգավաճեց Գեորգ Գ Մեծագործ կաթողիկոսի հիմնադրած (1874) ճեմարանը: Այստեղ աշխատանքի հրավիրվեց մտավորականների մի մեծ փաղանգ՝ Հրայր Աճառյանը, Կոմիտասը, Մանուկ Աբեղյանը, Հ. Հովհաննիսյանը, Գարեգին Հովսեփյանը, Լեոն, Մակար Եկմալյանը, Եղիշե Թադեոսյանը, Կարա-Մուրզան, Տեր-Սիմոնյանը, Վարդգես

Սուրենյանցը, Փանոս Թերլեմեզյանը, Մաղաքիա Օրմանյանը, Շավարշյանը, Քարամյանը, Ավդալբեկյանը եւ էլի շատ ուրիշներ:

Ճեմարանի դասախոսների մակարդակը բարձրացնելու նպատակով Խրիմյանը, շնորհիվ Մանթաշովի եւ այլ բարերարների հովանավորության, Եվրոպա, Պետերբուրգ, Մոսկվա եւ այլ քաղաքներ է գործուղում Կոմիտասին, Մ. Աբեղյանին, Տեր-Մինասյանին, Գ. Հովսեփյանին, Գետրգ Չորեքչյանին, Շավարշյանին, Էդիլյանին եւ ուրիշների:

Ժամանակակիցների վկայությամբ ու բնորոշմամբ Խրիմյան Հայրիկը իրենից առաջ եղած հոգեւորականներից ամենախոհուն ու ամենազգացմունքներն էր՝ գաղափարի ու ազատության ջահակիր՝ հայացքներով լուսավորիչ, գործունեությամբ ժողովրդանվեր ազգային գործիչ՝ լեզվով ճարտար ու կենդանի խոսքի անգուգական վարպետ՝ օժտված հումորի մեծ զգացումով:

Չնայած իր հոգեւորական բարձր պաշտոնին ու բազմազբաղ լինելուն, Հայոց Հայրիկի առաջին նպատակն էր ծառայել ազգի ազատագրական գործին: Այդ նպատակով նա 1895-ին մեկնել է Մանկոտ Պետերբուրգ, ներկայացել է Նիկոլայ Երկրորդ ցարին եւ աջակցություն հայցել Արեւմտյան Հայաստանի բարենորոգումների իրականացման համար, 1895-96 թվերի հայկական ջարդերի ժամանակ խնդրագիր է ուղարկել ոչ միայն ցարական պաշտոնյաներին, այլեւ անձամբ Նիկոլայ ցարին՝ աղերսելով կոտորածները դադարեցնել տալու միջամտություն: Այդ ժամանակներում նա Էջմիածնում է տեղավորում թուրքական յաթաղանից մազապուրծ հայ գաղթականներին, հանգանակություն է կազմակերպում նրանց նյութապես օգնելու եւ Արեւելյան Հայաստանում բնակվելու համար:

Վեհափառը մի քանի անգամ դիմել է նաեւ ըմբոստ քայլերի. ցարական կառավարությունը 1903 թվի հունիսի 12-ին հրո վարտակ է արձակում հայ եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու մասին: Խրիմյանը կարգադրում է հայկական եկեղեցական թեմերին չենթարկվել ցարական կառավարության որոշմանը, նա համարձակություն ունեցավ խնդրագիր գրել ցարին հայկական

դպրոցները վերաբացելու եւ ճեմարանը չփակելու վերաբերյալ, մերժեց Ստոլիպինի այն կարգադրությունը, ըստ որի Կովկասի բոլոր ժողովուրդները պետք է երդման բոլոր արարողությունները կատարեին ռուսերեն:

Հայրենամիտ Վեհափառը իր ազգանպաստ դժվարին ու քարքարոտ ճանապարհին առաջնորդվել է մի սելեռուն ու ազգամիտ գաղափարով՝ ազատագրել Հայաստանը բռնատիրության ճիրաններից, աշխարհով մեկ սփռված հայերին հավաքել հայրենի սկուֆի շուրջը եւ ստեղծել այնպիսի պայմաններ, որ այլեւս հայը իր դրախտային ոստանից չհեռանա, ապրի ու արարի իր պապենական հողի վրա: Նա աշխատում էր նաեւ ամեն ինչ անել, որ հայ գեղջուկը հարկադրված չլինի թողնել իր սրբազան հողը եւ գնալ բախտ որոնելու օտար ավերում: Այդ նպատակով նա 1905-ի մարտի 10-ին հայրենասիրական մի կոնդակով ազգահավաքման, հայրենադարձության կոչ է անում աշխարհասփյուռ հայերին.

«Արի՛ք, պանդուխտ ու տարագիր հայք, եկե՛ք եւ փութացարո՛ք հայրենի աշխարհի ձեր..., արի՛ք եւ շինեցե՛ք զավերական եւ բնակեցե՛ք ի նոսա, աճեցե՛ք եւ բազմացրո՛ք եւ լցե՛ք գերկիրն, երկիրն զոր ետ Տեր հարց ձերոց...» (Խրիմյան Հայրիկ, Երկեր, Եր., 1992, էջ 13):

Խրիմյանը գիտությունն ու արվեստը սիրող եւ մարդուն ըստ ամենայնի գնահատող անհատականություն էր: Նրա գահակալության տարիներին իր հետ ճեմարանում աշխատող Հրաչյա Աճառյանը, Կոմիտասը, Մանուկ Աբեղյանը, Հովհաննես Հովհաննիսյանը իրենց հիշողություններում խոսում են նաեւ Հայրիկի մարդկային բարձր արժանիքների, առաքինությունների, խոսքի վարպետության եւ հումորի մասին՝ ընդգծելով ոչ միայն նրա անսահման հայրենասիրությունն ու ազգին նվիրված լինելը, այլեւ սերն ու հոգատարությունը ճեմարանի ուսանողների ու դասախոսների նկատմամբ:

Մկրտիչ Խրիմյանը ոչ միայն հասարակական-քաղաքական ու կրոնական խոշորագույն գործիչ էր, այլեւ ներհուն մտավորական ու բնաշխարհիկ գրող: Դեռեւս 1849-ին «Բազմավեպ» հանդեսը

տպագրեց նրա գրական երախայրիքը. սրան հաջորդեցին «Հրավիրակ Արարատյան» (1850), «Հրավիրակ երկրին ավետյաց» (1851) չափածո ստեղծագործությունները: Առավել ժողովրդայնություն վայելեցին նրա «Վանգույժ» եւ «Հայգույժ» գործերը, առաջինում հեղինակը ողբում է Վանի հրդեհն ու կողոպուտը, երկրորդում՝ «վայրագ խուժերուն ձեռքեն հայոց անտեր ժողովրդի» կրած տառապանքները: 1876-ին լույս է տեսնում կյանք ու աշխարհ տեսած խոհուն փիլիսոփայի «Դրախտի ընտանիք» (ի պետս հայոց ընտանեաց), որտեղ երիտասարդ ընտանիքներին խորհուրդ է տրվում՝ ինչպես ընտանիք կազմել եւ ինչպես վարվել իրար նկատմամբ: 1894-ին լույս տեսած «Պապիկ եւ թռռնիկ» դաստիարակչական մեծ արժեք ունեցող երկը Խրիմյանի պատգամն է իր ժողովրդին՝ անթառամ պահել սերը հայրենի երկրի, նրա հողի ու ջրի նկատմամբ, երբեք չլքել այն, ինչքան էլ պայմանները սուղ լինեն: Այս հրաշալի աշխատությունն ունի նաեւ արդիական մեծ արժեք:

Հատուկ ընդգծենք, որ Ամենայն հայոց 130-րդ կաթողիկոս, նույնպես մեծատառով Մարդ ու դաստիարակ Վազգեն Ա-ի (Պալճյան) 1936 թվականին Բուխարեստի համալսարանի գրականության եւ փիլիսոփայության ֆակուլտետն ավարտելու ատենախոսության թեման էր «Խրիմյան Հայրիկը որպես դաստիարակ»:

Մեր խոսքն ավարտենք Սիամանթոյի հետեւյալ բնութագրմամբ՝ «Խրիմյան Հայրիկը պատմական այն դեմքերից է, որոնք իրենց ժամանակակիցների աչքում արդեն առանձնանում են որպես եզակի անհատականություն եւ որոնք հավերժ կապրեն իրենց ժողովրդի սրտում, ու նրանց պայծառ հիշատակը միշտ անմոռաց կմնա որպես զաղափարի ազատության ջահակրի»:

**ԽԱՉԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ,**

**Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

**ՄՍԱՄԲՈՒԼԻ «ԺԱՄԱՆԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ 100-ԱՄՅԱ  
ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ**

***Խրախուսելի երեսույթ հայ-թուրքական հարաբերությունների նոր  
արշալույսի համար***

Միսաք ու Սարգիս Քոչունյան եղբայրների ջանադրության շնորհիվ 1908 թվականի հոկտեմբերի 28-ին հիմնադրված Պոլսո գրական, քաղաքական ու հասարակական «Ժամանակ» օրաթերթն արդեն մեկ դար (թերթի գործունեությունը ընդհատվել է միայն սկզբնական շրջանում, 2 անգամ) անդրադառնում է Արեւմուտքի եւ Թուրքիայի քաղաքական անցուդարձին, միաժամանակ լուսաբանելով հայկական եկեղեցու, դպրոցի, մամուլի կյանքը սփյուռքում: «Համայնապատկեր տնտեսական եւ ճարտարապետական», «Երկրներ ու ժողովուրդներ» բաժիններում ներկայացվում են տարբեր երկրների դեպքերն ու դեմքերը, գրական բաժնում տպագրվում են արեւմտահայ եւ արեւելահայ դասական ու ժամանակակից գրողների գործերը, նաեւ քարգմանություններ եվրոպական արդի գրականությունից: 1990-ականներից ի վեր թերթում արտացոլվում են նաեւ Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները: Թերթի 100-ամյակին նվիրված անդրանիկ հանդիսությունը հոկտեմբերի սկզբին տեղի ունեցավ Միսաք Քոչունյանի ծննդավայրում՝ Հալեպում:



Օրաթերթի գործունեության ու Պոլսո իրականության մեջ նրա ունեցած դերի ու կշռի մասին գրուցեցինք վերջերս «Ազգի» խմբագրություն այցելած օրաթերթի գլխավոր խմբագիր Արա Քոչունյանի հետ:

- *Որո՞նք էին օրաթերթի ստեղծմանն ու գոյատևմանը նպաստող հիմնական ազդակները, քաղաքական ու հոգեւոր ի՞նչ նախադրյալներ էին ստեղծվել թերթի հիմնադրման համար:*

- Օրաթերթը ծնունդ առավ ճիշտ այն ժամանակ, երբ Թուրքիայում հարաբերական ազատություն էր հաստատվել՝ շնորհիվ օսմանյան պետությունում հռչակված երկրորդ սահմանադրության, որը դրականորեն ազդեց ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի կացության վրա: Թերթի հիմնադիրները՝ Միսաք եւ Սարգիս Քոչունյանները այդ ժամանակաշրջանի անվանի մտավորականներից էին, առաջինը վիպագիր էր, լրագրող, Ստամբուլի ազգային պատգամավորական ժողովի պատգամավոր, իսկ երկրորդը՝ Պոլսո պատրիարքարանի ելեւմտական հանձնախմբի ատենապետն էր, նաեւ Սբ. Աստվածածին եկեղեցու ծխական խորհրդի ատենապետը: Թերթի ազգային դիմագիծը նրանք են կերտել, խիստ բնորոշիչ է եղել նաեւ այն, որ «Ժամանակը» դարձել է նախորդ դարասկզբի ժողովրդավարական բովանդակություն ունեցող թերթերից մեկը՝ տարբեր կարծիքների ու տեսակետների համադրությամբ: Հիմնադրման շրջանում տպաքանակը 15 հազարից ավելի էր, թերթն առաքվում էր Արեւելյան Անատոլիայից մինչեւ Բալկաններ, հարավից մինչեւ հյուսիս, բավականին ընդգրկում շրջանով: Այդ ընթացքում Ստամբուլում կատարվում էին համաշխարհային նշանակության իրադարձություններ ու հասարակական կարծիք ձեւավորելու առումով հայկական մամուլի գործունեությունն ու բերած նպաստը շատ էական էր: Պատմության հոլովույթի մեջ աստիճանաբար փոխվում էր թերթի գործունեության բնույթը: Թուրքիայի հանրապետության ստեղծումից հետո, սփյուռքի մյուս թերթերի պես, «Ժամանակը» վերածվեց համայնքայինի, եւ այդ պայմաններում ոչ թե սահմանափակվեց թուրքական միջավայրով, այլ ջանքեր գործադրեց հետզհետե ձեւավորվող հայկական սփյուռքի տարբեր հատվածներից լրահոս ունենալու համար:

- *Ովքե՞ր են հանդես եկել օրաթերթի էջերում, ի՞նչ հրապարակումներով է առանձնացել «Ժամանակը»:*

- Սկզբնական շրջանում թերթում տեղ են գտել արեւմտահայ անվանի մտավորականների հրապարակումները: «Ժամանակի» պատմության մեջ եղավ այնպիսի շրջան, երբ այն հրատարակվեց «Ժողովրդի ձայն - Ժամանակ» անունով՝ գլխավոր խմբագիրը Վահան Թեքեյանն էր, թերթի առաջին էջի համար գրում էին Արշակ Չոպանյանի, Երվանդ Օտյանի, Միպիլի պես անվանի մտավորականները:

- Չուտ համայնքային թերթ դառնալուց հետո արդյո՞ք ծագել են որոշակի բարդություններ, որոնց հաղթահարումը ճիգերի լարում է պահանջել:

- Որոշ ձեռքբերումներ, իհարկե, եղել են, չի կարելի թերագնահատել հայապահպանության համար հայ մամուլի գործունեությունը, որ Ստամբուլի պարագայում կարող ենք «Ժամանակի» օրինակով ներկայացնել: Հայկական մամուլն իր դերակատարությունը բերեց սփյուռքի ավանդույթների ձեւավորման ու պահպանման, ազգային կառույցների հակակշռման, հայ հասարակության համախմբման եւ այլ առումներով: Դա էր գլխավոր առանձնահատկությունը, եւ այդ միջավայրում «Ժամանակն» իր գործունեությունը տեսականացրեց՝ նախանձախնդիր լինելով հայապահպանության, ազգային հաստատությունների առողջ գոյատեւման եւ արդյունավետ աշխատանք ծավալելու առումներով:

Հաջորդ շրջանը բերել է մի երեսույթ, երբ հնարավոր չի եղել սփյուռքի նոր սերնդին լիարժեք իմաստով փոխանցել հայկական արժեքները, գուցե դա տվյալ իրականությունից բխող երեսույթ էր, բայց հավաքական ճիգերով հանդերձ, հնարավոր չէ միարժեքորեն ասել, որ այդ շրջանում ամեն ինչ կատարյալ է արվել: Այդ ամենն իրար վրա գումարելով, հայկական արժեքները սերնդե-սերունդ փոխանցելու խնդիր է առաջացել: Դա, իհարկե, իր ազդեցությունն է ունեցել նաեւ մեր մամուլի վրա, որովհետեւ գուգադիպել է այնպիսի ժամանակահատվածի հետ, երբ նոր տեխնոլոգիաների արագընթաց զարգացումն անդրադարձել է լրատվամիջոցների վրա: Սակայն լավ իմանալով իր համեստ հնարավորությունները, մեր մամուլն

անցումային շրջաններում դրսևորել է հասունություն՝ ժողովրդին ցույց տալով լայն հորիզոններ:

*- Գուցե արդեն խոսենք նոր շրջանի մասին ու փորձենք պատկերացում կազմել, թե ի՞նչ փոփոխություններ կատարվեցին «Ժամանակ»-ում Հայաստանի անկախությունից հետո:*

- Թեպետ վաղ է պատմական գնահատական տալ, բայց արդեն իսկ կարելի է ասել, որ մեր ճակատագիրն էական փոփոխության ենթարկվեց, քանի որ անկախությունից հետո Հայաստանն ամբողջ աշխարհի հայության համար ձգողական ուժ ունեցավ, սփյուռքի մամուլն էլ իր հայացքը սեւեռեց հայրենիքի վրա: Նոր ժամանակները մեզ թելադրեցին հայրենիք ունենալու եւ նոր մարտահրավերներին դիմադրելու հրամայական, բոլոր գաղութների հայկական թերթերը համապատասխան կեցվածք որդեգրեցին: «Ժամանակը» այն թերթերից էր, որը խանդավառվեց Հայաստանի անկախացումով ու հետեւեց բոլոր իրադարձություններին ու զարգացումներին: Չհարելով որեւէ կուսակցության, մեր թերթը սփյուռքի անկախ թերթերի շարքում երեւի միակն էր, (բացառությամբ վերջին 1 տարվա), որ վերջին 10 տարիներին Հայաստանում սեփական թղթակից ուներ:

*- Քանի՞ լրագրող ունի թերթը: Չեզ հաջողվո՞ւմ է ներդաշնակ մթնոլորտ ստեղծել խմբագրատանը:*

- Անցյալի հետ համեմատած հիմա աշխատակիցների թիվը նվազել է, սակայն ունենք երիտասարդ կադրեր, որոնց հետ ներդաշնակ համատեղություն է ստեղծվել, քանի որ փորձառու աշխատակիցներն իրենց գիտելիքները փոխանցում են նորերին, վերջիններս էլ՝ ներշնչվում են նրանց կերպարով: Սփյուռքում հայ մամուլին աշխատակցելու երեւոյթը նույնացվում է նվիրվածության, նաեւ հայ մամուլի առաքելության հանդեպ համառ հավատքի հետ: Չեմ ուզում որեւէ մեկի անունը նշել, ի վերջո թերթը կուէկտիվ աշխատանքի արդյունք է եւ յուրաքանչյուրի բերած նպաստն իր նշանակությունն ունի: Այդ մոտեցումն այնպիսի մթնոլորտ է ստեղծում, որ որեւէ մեկը չի կարողանում ինքն իրեն կարեւորել: Հենց

դա էլ ամրապնդում է խմբային ոգին, 100-ամյա թերթի գոյությունը չի կարելի բացատրել անձնական դրսևորումներով: Գուցե որպես դասական առաջարկ ընկալեք, բայց կցանկանայի, որ այս հարցազրույցում հարգանքի տուրք մատուցեինք հայ պարբերական մամուլի հիմնադիր Հարություն քահանա Շմավոնյանին, որովհետեւ եթե նրա հիմնադրած «Ազդարարը» չլիներ, այսօր մենք հայ մամուլի զինվորները չէինք լինի: Ներկա աշխատակիցներին արժանին մատուցելով, կցանկանայի հարգանքով հիշել մեզանից անդարձ բաժանվածներին:

*- Իր գործունեության սկզբում «ժամանակը» 2 անգամ ճնշումների է ենթարկվել ու հարկադրված է եղել տպագրվելու մեկ այլ անունով: Գնշումների դրդապատճառը միայն հայկական լինելն է, թե՞ կան նաեւ այլ հանգամանքներ:*

- Երբ խոսում ենք հայ մամուլի նկատմամբ ճնշումների մասին, մեր մտքում ակամա այն հարցադրումն է ծնվում, որ դրա պատճառը հայկական լինելն է: Ուրախությամբ պիտի ասեմ, որ գուտ հայկական թերթ լինելու համար «ժամանակը» գրեթե այդպիսի խնդրի դեմհանդիման չի կանգնել: Օրինակ, մեր վարժարանները գուտ հայկական լինելու պատճառով որոշ խոչընդոտներ ունենում են, համայնքային մյուս հաստատությունները նույնպես, բայց մամուլի պարագայում այդպիսիք գրեթե չկան, եւ դա, իրոք, ուրախալի երեւոյթ է: Մեզ այսօր տանջում են բոլոր այն հարցերը, որ մտահոգիչ են նաեւ թուրքական մամուլի համար:

*- Ստամբուլահայության արտագաղթը վերջին շրջանում մարտն է, թե՞ նկատելի է նոր ալիք:*

- Մինչեւ 1980-ականների երկրորդ կեսը արտագաղթի հոսանքը զգալի էր, բայց 1990-ականներից սկսած այդ թափը կանգ առավ՝ Թուրքիայի տնտեսական վերելքի պատճառով: Երկրի տնտեսությունն ինտեգրվեց համաշխարհային տնտեսությանն ու տնտեսական վերելք արձանագրելը բավականին կայուն դարձավ: Հիմա երկրից հեռանալու առանձնակի ձգտում չի նկատվում: Յավոք, վերջին տարիներին հայաստանցիներն են արտագաղթում Ստամբուլ,

իրենց օրվա հացը վաստակելու համար: Բայց մենք չենք ցանկանում, որ մեր համայնքի անդամների թիվն այս ձեռով ավելանա:

- Իսկ ի՞նչ ազդեցություն է ունեցել թերթը հայ-թուրքական հարաբերությունների վրա, ի՞նչ կեցվածք է ընդունել վերջին տարիներին:

- Վերջին 20 տարիներին Հայաստանի հանդեպ մեր դրսևորած մոտեցումներն, անշուշտ, կարելի է դիտարկել հայ-թուրքական հարաբերությունների տեսանկյունից, որովհետև գրեթե բոլորն են ընդունում, որ «Ժամանակը» ստամբուլահայության կաթիլի շարունակությունն է: Մենք, իհարկե, դա հաճույքով ենք ընկալում, բայց միեւնույն ժամանակ պարտավորված ենք զգում նոր մարտահրավերներին դիմանալու ու սեփական կեցվածք ունենալու առումով: Հիմնադրման շրջանից ի վեր «Ժամանակ» օրաթերթը գտնվեց Քոչունյան գերդաստանի դեկի ներքո: Հիմնադիրների մահվանից հետո թերթի դեկը հանձնվեց Սարգիս Քոչունյանի որդուն՝ Սարտիրոսին, որը մինչև 1975 թվականը «Ժամանակի» խմբագրապետն էր, ավելի ուշ այդ գործը ստանձնեց պապս՝ Արա Քոչունյանը, որից հետո թերթի սեփականատերը դարձավ հայրս՝ Սարգիս Քոչունյանը, իսկ մայրս՝ Նադյա Քոչունյանը, հրատարակչության տնօրենն է: Ես խմբագրի դերում եմ, այնպես որ փորձում ենք չխախտել ընտանեկան նվիրապետական կարգը: Թեև մեր թերթը նույնացվում է գերդաստանային գործի հետ, բայց մյուս կողմից պիտի ընդունենք, որ սփյուռքի պայմաններում հայկական օրաթերթ պահելը, այն էլ՝ 100 տարի, ընտանեկան քմահաճությամբ անելու գործ չէր, այսինքն՝ մարդկանց բոլոր գոհողություններով հանդերձ, առաջին հերթին պետք է ընդգծել ընթերցող հասարակության դրսևորած թերթին տեր կանգնելու գիտակցությունը: Փաստորեն «Ժամանակը» հայ իրականության, ինչպես նաև Թուրքիայում լույս տեսնող օրաթերթերից ամենահինն է: Հայ-թուրքական հարաբերությունների առումով սա հետաքրքրական փաստ է, որովհետև Ստամբուլը Թուրքիայի առաջատար քաղաքն է եւ էթնիկ միջավայրում հայկական թերթի դարավոր գոյատևումը, ինչ էլ որ ասենք, դրական երեւոյթների շարքն է դասվում: Բարդագույն

հանգույցներով լի պատմական անցյալից հետո հայերն ու թուրքերն այսօր նոր արշալույսի որոնումների մեջ են՝ յուրաքանչյուրն իր նախանձախնդրությամբ ու նախապատվություններով, բայց ամբողջի մեջ նկատելի է դրական, խորհրդանշական ու խրախուսող երեւոյթ՝ «Ժամանակի» 100-ամյա գոյությունը:

Հայկական մամուլը մոտավորապես 200 տարուց ավելի պատմություն ունի, եւ դրա կեսից ավելիի ականատեսն ու վկան «Ժամանակն» է, եւ առհասարակ, հայ պարբերականների ավելի քան կեսը հրատարակվել են Ստամբուլում: Եթե ուսումնասիրենք հայկական օրաթերթի 100-ամյա գոյատեւման տարեդարձի երեւոյթը, կհամոզվենք, որ դա լուրջ նշանակություն ունի հայրենիք-սփյուռք հարաբերությունների տեսանկյունից, որովհետեւ Հայաստան-սփյուռք հարաբերությունները միշտ դիտարկել ենք որպէս մեկ մարմնի 2 թելեր: Մարմնի առողջության տեսակետից էական է, որ երկուսն էլ ամուր ու ներդաշնակ լինեն: Սփյուռքում ունենք շատ կարեւոր ավանդույթներ ու զանազան ոլորտներում արձանագրված ձեռքբերումներ, որոնք կարող են խրախուսելի լինել Հայաստանի համար: Ստամբուլը հայկական սփյուռքի մեջ իր ուրույն տեղն ունի, կենդանի եւ արթուն համայնք է, փորձում է մինչեւ այս պահը իր խոր ավանդույթներն ու սերած ժառանգությունն արժեւորել եւ հայկական դիմագիծը պահել: Այս ամբողջի մեջ ստամբուլահայ մամուլը համահայկական մակարդակի վրա իր ուրույն տեղն ունի, հետեւում է Հայաստանի անցուղարձին, Մայր աթոռի գործունեությանը: Այսօր, երբ համահայկական նոր ինքնություն է ձեւավորվում, պետք է Հայաստանը ճանաչել իր բոլոր երեսակներով՝ առանց լոգունգների ու ճառերի: Եթե հիմնավորված քայլեր չանենք, ուրեմն ի սկզբանե դատապարտված ենք: